ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(1969 թ. հոկտեմբերի 5)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Աստուած զօրութեանց, դարձ հայեաց յերկնից և տես, այց արա այգւոյս այսմիկ, և դարման տար սմա զոր տնկեաց աջ քո» (Սաղմ. ՀԲ 15—16):

Ով սուրբդ Գրիգոր, Հայրապետ և Լուսավորիչ մեր, սրբություններու քու աշխարհեդ, այսօր հայացքդ մեզի դարձուր, դեպի այս նվիրական տաճարը միածնաէջ, որ մարմին ու հոգի առավ քու հրաշք տեսիլքովդ շատ դարեր առաջ, և մնաց մինչև մեր օրերը անսասան վեմը հայոց քրիստոնեական հավատքին:

Տես, երանելի Հայրապետ մեր, մենք քահանայք և ժողովուրդ, մենք հայեր՝ սուրբ գրական Հայաստան երկրեն և աշխարհի բոլոր ծագերեն ի մի հավաքված այստեղ Քրիստոսի անունով, ս. պատարագի մատուցմամբ օրհնեցինք այս անարատ յուղը, սրբալույս մյուռոնը կանաչ, աղոթքներով սրտաբուխ, որ սուրբ Հոգվո ներգործությամբ, ան դառնա դրոշմ շնորհաց, դեղ բժշկությանց և աղբյուր մխիթարությանց:

Լուսավորիչ Հայր մեր, այսօր մենք բոլորս, հոգեծին քու զավակներդ, երկյուղածությամբ մեր սիրտը քեզի կբանանք, անգամ մը ևս խոստովանելու այն հավատքը, որուն համար դուն չարչարվեցար և փառքով հաղթեցիր չարին: Այն հավատքը, որով մեր ազգը համայն դարեր ու դարեր ապրեցավ ու տքնեցավ, և իր քրիստոնեական ազգային մշակույթը ստեղծեց: Այն հավատքը, որով մեր ժողովուրդը, իր հերոսական պատմությունը դարբնեց հանուն Հիսուսի և հանուն հայրենյաց ազատության:

Սուրբ Հայրապետ մեր, երկնային շնորհաբաշխության այս մեծախորհուրդ պահուն, մենք բոլորս կխոնարհինք քու լույս հիշատակիդ առջև և նորեն կուխտենք՝ բանիվ և գործով հավատարիմ մնալու քու շողակաթ տեսիլքիդ, հավատարիմ մնալու մեր ս. հայրերու հոգևոր ժառանգության, հավատարիմ մնալու մեր ազգի պատմության ոգիին, որ կփայլատակի Ավարայրեն մինչև Սարդարաբադ:

Այս խոստովանությամբ և այս ուխտով է որ մենք՝ նոր մյուռոն օրհնեցինք այսօր 1969 փրկչական թվականին, այսօր մարդկային գիտական ճանաչողության և տեխնիկ սքանչելագործ հառաջդիմության դարաշրջանին: Մենք իրավ հիացումով կգնահատենք գիտության ստեղծարար իրագործումները՝ իբրև մարդու իմացականության փառքի տիտղոս: Սակայն այսօր մենք կտեսնենք նաև պատկերը արդի աշխարհի ընկերային և միջազգային կյանքին, ուր մարդիկ և ժողովուրդներ կգտնվին անդունդին առջև՝ բարոյական փլուզումներու, տառապալից զրկանքներու, աղաղակող անարդարություններու, և ազգամիջյան մահասփյուռ բախումներու:

Հոգիներու և աշխարհի մեջ խաղաղություն չկա: Վերջապես ե՞րբ և ի՞նչպես մարդիկ պիտի կարողանան պեղել և կյանքի կոչել բարիին ճշմարիտ ուժերը մարդկային հոգեկան տիեզերքին: Մենք կհավատանք թե բարոյական այդ ուժերը որոնելու և հայտնաբերելու փրկարար ճանապարհին վրա, վճռական առաքելություն ունին նաև կրոնները բոլոր, հատկապես քրիստոնեական եկեղեցիները:

Քրիստոնյաներ բոլոր երկիրներեն, միանանք Աստուծո անունով և գործենք ձեռք-ձեռքի տված, ի խնդիր մարդու ոգեկան արժեքներու փրկության, ի խնդիր ժողովուրդներու եղբայրության, ի խնդիր աշխարհի խաղաղության:

Մենք կաղոթենք, որ սրբափայլ յուղը զոր այսօր օրհնեցինք, ըլլա նաև խաղաղության մյուռոն և բաշխվի մեր համայն հավատացյալ ժողովուրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Այսպիսով, հայոց մյուռոնը, սուրբ Էջմիածնի մյուռոնը, թող դառնա կաթիլ մը ճառագայթ, իր լույսը բերելու, մարդկային աշխարհի խաղաղության և փրկության ճանապարհին վրա: Քրիստոսով, երկնից արքայության հույսը մեր սրտերուն մեջ առած, աշխատինք ու մարտնչինք մեծ պատվիրանին կենսագործման համար՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Հայր մեր, առաջնորդ և բարի հսկող, հայացքդ հառե նաև նվաստիս և մեղավորիս, որ պահ մը քու Աթոռիդ առջև ծունկի եկած, մեծ տեսիլքովդ դյուրված, իր կյանքը և հոգին ընծա կբերե՝ քու աղոթքի և քու ուխտի այս տաճարին, սուրբ Էջմիածնին, որպեսզի ան նոր լույսով շողա իր հին փառքին մեջ, որպեսզի անսասան մնա քու հայրապետական գահդ, իբրև Աթոռ Ամենայն Հայոց Հայրապետության, որպեսզի մեկ ու անբաժան ու անխոով մնա քու եկեղեցիդ՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, համայն իր հավատացյալ ժողովուրդով:

Եվ որ արևոտ օր մը, հայերը բոլոր, հավատավոր որդիներդ քու, բոլորված սուրբ գրականն Արարատին շուրջ, ապրին, աճին և իրենց նոր ճակատագիրը կերտեն, և իրենց ստեղծարար առաքելությունը շարունակեն եղբայրացած ազատ ժողովուրդներու, խաղաղ ու արդար աշխարհի մը մեջ:

Հայրապետ մեր սուրբ, հավերժությանց աշխարհի բարձունքներեն, լսե մեր աղերսն ու պաղատանքը, և բարեխոս եղիր Աստուծո միածին Որդվույն առաջ, որպեսզի Տերը և Փրկիչը մեր նոր ուժ և նոր լույս պարգևե Մեզ և հավատարիմ Մեր գործակից եղբայրներուն, մեր պարտքը արիությամբ կատարելու, մաքուր սրտով, և կամքով՝ վճիտ ու վճռական:

«Քրիստոս թագաւոր, խոնարհեցո զունկն Քո յաղաչանս մեր և առաքեա զողորմութիւնս Քո ի գործս ձեռաց մերոց, անտես առնելով զմեղս մեր, դարձ առ մեզ Աստուած փրկութեան մերոյ. երևեցո զերեսս քո ի մեզ և կեցցուք. զի քո է իշխանութիւն և փառք այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից». ամեն: